ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՕԳՈՍՏՈՍԻ 2022թվականի N 216-Ա

ԱՐՍԵՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՄՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետով և հաշվի առնելով Արսեն Քոչարյանի դիմումը՝
Ո ր ո շ ու մ ե մ.

1.Արսեն Արծրունու Քոչարյանին 2022 թվականի օգոստոսի 3-ից նշանակել Թումանյան համայնքի Շամուտ բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնում:
2.Աշխատավարձը՝ըստ Թումանյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 10-Ա որոշման հավելվածով հաստատված պաշտոնային դրույքաչափի,աշխատաժամանակի ռեժիմը՝ հնգօրյա աշխատանքային շաբաթ՝երկու հանգստյան օրով, ամենամյա արձակուրդի տեսակը՝նվազագույն և լրացուցիչ (20+4 աշխատանքային օր տևողությամբ):
3.Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022թ. օգոստոսի 02
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2022թվականի N 217-Ա

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՒՍԻԿԻ ԵՂԻԿՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՅԿ ՀՈՒՍԻԿԻ ԵՂԻՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Սուսաննա Հուսիկի Եղիկյանի /մուտք՝ 03.06.2022թ. թիվ 373/ դիմումը,Հողային բարեփոխ. և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 22.04.1991թ. թիվ 6 որոշումը, <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ–ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով ,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, և ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով՝
Որոշում եմ.

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-035-0047-0003 ծածկագրից առանձնացված 0.02 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ Սուսաննա Հուսիկի Եղիկյանի /ծնվ. 17.08.1954թ./ և Հայկ Հուսիկի Եղինյանի/ծնվ. 9.04.1959թ./ սեփականության իրավունքը:

2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, ընդգրկված չէ ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում,չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները:

3. Հողամասի սահմանները որոշվում է համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

5. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2022թ. հունիսի 28-ի N 173-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022թ. օգոստոսի 03
ք.Թումանյան